# ՀՈՒՇԱԳԻՐ

**«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ**
**(Հայաստանի Հանրապետություն)**
**և Տեխնիկական կանոնակարգման և չափագիտության**
**Դաշնային գործակալության**
**(Ռուսաստանի Դաշնություն)**
**միջև**
**ստանդարտացման և չափագիտության ոլորտում**
**համագործակցության փոխըմբռնման մասին**

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունը (Հայաստանի Հանրապետություն) և Տեխնիկական կանոնակարգման և չափագիտության Դաշնային գործակալությունը (Ռուսաստանի Դաշնություն) այսուհետ՝ Կողմեր,
ցանկություն հայտնելով զարգացնել և ամրապնդել համագործակցությունը ստանդարտացման և չափագիտության ոլորտում՝ կողմերի միջև տեղեկատվության և ձեռք բերված փորձի փոխանակման նպատակով,
փոխըմբռնման են հասել հետևյալի վերաբերյալ.

1. Սույն Հուշագրի նպատակը ստանդարտացման և չափագիտության ոլորտում Կողմերի առավել սերտ համագործակցությանն աջակցությունն է, ինչպես նաև տեղեկատվության և փորձի փոխանակման պարզեցումը:

2. Կողմերը, համաձայն իրենց պետությունների օրենսդրության և իրավասության շրջանակներում կզարգացնեն համագործակցությունը
հետևյալ ոլորտներում.

– միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման և չափագիտության կազմակերպությունների հարթակներում կարծիքների (տեսակետների) համակարգում,
– փոխգործողություն առաջնային էտալոնների համեմատության ԿՕՕՄԵՏ-ի համատեղ մասնակցությամբ նախագծերի շրջանակներում,
– ստանդարտացման ոլորտում փաստաթղթերի և տեղեկատվության, այդ թվում ստանդարտացման ազգային համակարգի, ստանդարտների մշակման ընթացակարգերի կանոնների, մշակման տարբեր փուլերում գտնվող ստանդարտների վերաբերյալ մեկնաբանությունների տեղեկատվության փոխանակում,
– չափագիտության ոլորտում փաստաթղթերի և տեղեկատվության, այդ թվում չափումների միասնականության ապահովման ազգային համակարգի, չափումների միասնականության ապահովման ոլորտում պետական կանոնակարգման կանոնների և ձևերի, մշակման տարբեր փուլերում գտնվող տարբեր նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի վերաբերյալ մեկնաբանությունների տեղեկատվության փոխանակում,
– տեղեկատվության, հրապարակումների, փորձի, զեկույցների (հաշվետվությունների) և այլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության փոխանակում,
- պետական չափագիտական հսկողության (վերահսկողություն) ոլորտում փորձի փոխանակում,
– ազգային էտալոնների երկկողմանի համեմատությունների և տրամաչափարկումների իրականացում,
– փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող չափումների տեսակների և ոլորտների զարգացման և կատարելագործման նպատակով համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում,

– լաբորատոր փորձարկումների պրակտիկայի, չափումների մեթոդիկաների (մեթոդների) կիրառման, այդ թվում ռեֆերենս չափումների շրջանակներում տեղեկատվության փոխանակում,
– ստանդարտացման և չափագիտության ոլորտում ուսումնական նյութերի և ուսուցման ծրագրերի փոխանակում,
– ստանդարտացման և չափագիտության ոլորտում անձնակազմի պատրաստման և վերապատրաստման հնարավորության տրամադրում,
– փորձագետների հանդիպումների, սեմինարների և կոնֆերանսների անցկացում,
– Կողմերի համատեղ նախագծերի իրականացման համակարգում:

Համագործակցությունը կարող է իրականացվել նաև այլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

3. Կողմերը սույն Հուշագրի իրագործման ծախսերը կրելու են ինքնուրույն, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար այլ պայմանավորվածություն չի ձեռք բերվի:
4. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ:
5. Սույն Հուշագրի իրականացման ընթացքում ծագած տարաձայնությունները կլուծվեն Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:
6. Սույն Հուշագիրը միջազգային պայմանագիր չէ և չի ստեղծում (առաջացնում) միջազգային իրավունքով կարգավորվող իրավունքներ և պարտականություններ:
7. Սույն Հուշագիրը գործում է ստորագրման ժամկետից: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Հուշագրի կիրառումը՝ գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Այս դեպքում սույն Հուշագրի գործողությունը դադարեցվում է նման ծանուցման ուղարկման օրվանից երեսուն (30) օրացուցային օր հետո:
Ստորագրված է 2022 թվականի հունվարի 26-ին Մոսկվայում, երկու օրինակով, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն լեզուներով:

| | |
|---|---|
| **Տեխնիկական կանոնակարգման և չափագիտության դաշնային գործակալության (Ռուսաստանի Դաշնություն)** | **«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ (Հայաստանի Հանրապետություն)** |

# МЕМОРАНДУМ
## между Федеральным агентством по техническому регулированию и метрологии (Российская Федерация) и Закрытым акционерным обществом «Национальный орган по стандартизации и метрологии» (Республика Армения) о взаимопонимании по сотрудничеству в области стандартизации и метрологии

Федеральное агентство по техническому регулированию и метрологии (Российская Федерация) и Закрытое акционерное общество «Национальный орган по стандартизации и метрологии» (Республика Армения) далее именуемые Сторонами,

выражая желание развивать и укреплять сотрудничество в области стандартизации и метрологии с целью обмена информацией и накопленным опытом между Сторонами,

достигли взаимопонимания о нижеследующем:

1. Целью настоящего Меморандума является содействие более тесному сотрудничеству Сторон в области стандартизации и метрологии, а также упрощение процесса обмена информацией и опытом.

2. Стороны в рамках компетенции и в соответствии с законодательством своих государств будут развивать сотрудничество по следующим направлениям:

– координация позиций на площадках международных и региональных организаций по стандартизации и метрологии;

– взаимодействие в рамках совместного участия в проектах КООМЕТ по сличению первичных эталонов;

– обмен документами и информацией в области стандартизации, включая сведения о национальной системе стандартизации, правилах и процедурах разработки стандартов, комментариях к стандартам на различных этапах разработки;

– обмен документами и информацией в области метрологии, включая сведения о национальной системе обеспечения единства измерений, правилах и формах государственного регулирования в области обеспечения единства измерений, комментарии к различным нормативно-правовым и нормативно-техническим документам на различных этапах разработки;

– обмен информацией, публикациями, опытом, отчетами и другими сведениями, представляющими взаимный интерес;

– обмен опытом в области государственного метрологического контроля (надзора);

– осуществление двусторонних сличений и калибровок национальных эталонов;

– проведение совместных научно-исследовательских работ по развитию и совершенствованию областей и видов измерений, представляющих взаимный интерес;

– обмен информацией в рамках практики лабораторных испытаний, разработки и применения методик (методов) измерений, в том числе референтных;

– обмен учебными материалами и программами обучения в области стандартизации и метрологии;

– предоставление возможности подготовки и переподготовки персонала в области стандартизации и метрологии;

– проведение встреч экспертов, семинаров и конференций;

– координация реализации совместных проектов Сторон;

Сотрудничество может осуществляться также по иным направлениям, представляющим взаимный интерес.

3. Стороны будут самостоятельно нести расходы по реализации настоящего Меморандума, если в каждом конкретном случае не будет достигнуто договоренности об ином.

4. В настоящий Меморандум могут вноситься изменения или дополнения по взаимному согласию Сторон.

5. Разногласия, возникающие в ходе реализации настоящего Меморандума, будут разрешаться путем консультаций и переговоров между Сторонами.

6. Настоящий Меморандум не является международным договором и не создает прав и обязательств, регулируемых международным правом.

7. Настоящий Меморандум применяется с даты его подписания. Любая из Сторон может прекратить применение настоящего Меморандума, направив письменное уведомление другой Стороне. В этом случае применение настоящего Меморандума прекращается через тридцать (30) календарных дней с даты направления такого уведомления.

Подписано в г. Москва (Российская Федерация) 26 января 2022 года в двух экземплярах, каждый на армянском и русском языках.

| | |
|---|---|
| **За** | **За** |
| **Федеральное агентство по техническому регулированию и метрологии (Российская Федерация)** | **Закрытое акционерное общество «Национальный орган по стандартизации и метрологии» (Республика Армения)** |